Հեռախոսակապի ծառայությունների մատուցման
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՖՆ ԲԸԱՀԾՁԲ-04/15-1

ք. Երևան 27.02. **2015թ.**

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմը՝ ի դեմս աշխատակազմի ղեկավարի ժ/պ Ա.Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ.Եսայանի, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պատվիրատուի ՀՀ ֆինանսների նախարարության ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին համապատասխանև սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանվում է ՀՀ ֆինանսների նախարարի 06/08/13թ. թիվ 673-Ն հրամանով:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է 102000000.0/մեկ հարյուր երկու միլիոն/ ՀՀ դրամ:

Պայմանագրի Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով, նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական կարտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է կողմերի միջև 2015թ. փետրվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

բ) պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է – էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմ
ք.Երևան, Մելիք-Ադամյան 1
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900011017101
Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն

Ղեկավարի ժ/պ՝

Ա.Գևորգյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Յուքոմ» ՍՊԸ

ք. Երևան, Սայաթ-Նովա-40/1
«էյչ- էյս- Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217001264993001
ՀՎՀՀ 00024873

Տնօրեն՝

Հ. Եսայան
(ստորագրություն)Կ.Տ

Հավելված N 1
2015թ. կնքված
N ՀՀ ՖՆ ԲԸԱՀԾՁԲ-04/15-1գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցման

Հ/հ	Ծառայություն*			
	Գնման առարկային անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Քանակ (առավելագույն)	Մեկ միավորի բաժանորդային վարձ ներառյալ ԱԱՀ
1	Ֆիքսված հեռախոսակապի ծառայության մատուցման	E1 Ծառայություն	2	70 000
		Հեռախոսահամարների շարք Ulphone 360 անվճար բոպե	1 500	2 500
		Հեռախոսազանգերի ուղղություն	**Սակագին (ՀՀ դրամ/բոպե)**	
		Դեպի 011, 060 և 010 կոդով և ՀՀ մարզեր ֆիքսված հեռախոսակապ	4 դր	
		Դեպի ՀՀ բջջային ցանցեր	24 դր	
		Դեպի ԼՂՀ բջջային հեռախոսակապ	28 դր	
		Դեպի ԼՂՀ ֆիքսված հեռախոսային ցանցեր	18 դր	
		Ծառայության մատուցման ժամկետը		
		Սկիզբը	**Ավարտը**	
		Կնքվելիք պայմանագիրը տարածվում է 01.02.2015 սկսած փաստացի ծագած հարաբերությունների վրա	Ծառայությունները պետք է մատուցվեն այմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 730 օր /24 ամիս/: Ընդ որում, 365 օր /12ամիս/ ծառայությունները մատուցվելուց հետո, հաջորդ ամիսների համար համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացվելու դեպքում կնքվի լրացուցիչ համաձայնագիր:	

*Նշված հեռախոսահամարները կարող են ակտիվանալ և ապաակտիվանալ Պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա:

**Ընդ որում ծառայությունների ամսավճարը որոշվում է ըստ բաժանորդին փաստացի տրամադրված հեռախոսային ծառայությունների քանակի:

***2015 թվականի Գնման գործընթացի ֆինանսական միջոցները նախատեսված է 2015 թվականի ՀՀ ֆինանսների նախարարության 01.01.01.04; 01.01.02.03 և 01.01.02.13 ծրագրերով (հոդված՝ 4214):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմ
ք.Երևան, Մելիք-Ադամյան 1
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900011017101
Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն

Ղեկավարի մ/պ՝

Ա.Գևորգյան
(ստորագրություն) Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FINANCE OF THE REPUBLIC OF ARMENIA
02629081

ԿԱՏԱՐՈՂ
«Յուքոմ» ՍՊԸ
ք. Երևան, Սայաթ-Նովա-40/1
«էյչ- էյս- Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 21700126499300 1
ՀՎՀՀ 00024873

Տնօրեն՝

Հ. Եսայան
(ստորագրություն)Կ.Տ

Հավելված N 2
27.02. 2015թ. կնքված
N ՀՀ ՖՆ ԲԸԱՀԾՁԲ-04/15-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

	Ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	* Նախատեսվում է ֆինանսավորել 2015 թվականին՝ ընդ որում				
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Ընդամենը տարի
		հունվար-մարտ	ապրիլ-հունիս	հուլիս-սեպտեմբեր	հոկտեմբեր-դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7
1	<<Նախարարության աշխատակազմի պահպանում>> ծրագրով /Բաժին՝ 01, Խումբ՝ 01, Դաս 02, Ծրագիր՝ 03, Հ/Հ՝ **900011017101**					
	Հեռախոսակապի ծառայությունների մատուցման	13,000,000.0	29,000,000.0	58,000,000.0	66,000,000.0	**66,000,000.0**
2	<<Հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ >> ծրագրով /Բաժին՝ 01, Խումբ՝ 01, Դաս 02, Ծրագիր՝ 13, Հ/Հ՝ **900013574018, 00013202016**					
	Հեռախոսակապի ծառայությունների մատուցման	5,000,000.0	15,000,000.0	25,000,000.0	36,000,000.0	**36,000,000.0**
	Ընդամենը	*18,000,000.0*	*44,000,000.0*	*83,000,000.0*	*102,000,000.0*	*102,000,000.0*

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմ
ք.Երևան, Մելիք-Ադամյան 1
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900011017101, 900011017135, 900013574018, 900013202016
Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն

Ղեկավարի ժ/պ՝ _____
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Յուքոմ» ՍՊԸ
ք. Երևան, Սայաթ-Նովա-40/1
«էյչ- էյս- Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217001264993001
ՀՎՀՀ 00024873

Տնօրեն՝ _____ Հ. Եսայան
(ստորագրություն)Կ.Տ

Հավելված N 3
2015թ. կնքված
N **ՀՀ ՖՆ ԲԸԱՀԾՁԲ-04/15-1** գնման պայմանագրի

ԿԱՏԱՐՈՂ
«Յուքոմ» ՍՊԸ
ք. Երևան, Սայաթ-Նովա-40/1
«էյչ- էյս- Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217001264993001
ՀՎՀՀ 00024873

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմ
ք.Երևան, Մելիք-Ադամյան 1
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900011017101, 900011017135, 900013574018, 900013202016
Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

2015 թ.

Պայմանագրի անվանումը՝ **Ծառայությունների մատուցման**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ **« » «» 2015 թ.**

Պայմանագրի համարը՝ **« ՀՀ ՖՆ ԲԸԱՀԾՁԲ-04/15-1»**

Պատվիրատուն, ՀՀ ՖՆ աշխատակազմը, ի դեմս Գործերի կառավարիչ Տ. Ղազարյանին և Կատարողը՝ «Յուքոմ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ա. Զաքարյանի, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը << >> << >>2015թ-ից << >> << >>2015թ. ընկած ժամանակահատվածում Կատարել է հետևյալ Աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	**Գնման առարկայի անվանումը քանակական ցուցանիշները**	**ռանքների կատարման ժամկետը**	**արման ենթակա գումարը հազար դրամ)**	**ման ժամկետը ժամանակացույցի)**
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ Աշխատանքի կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Աշխատանքն ընդունեց